

տոհմային կոչմունք՝ թելադրեցին մեզ ա-  
սոնց ձեւերն ալ տեսնել մեր մէջ. ուր այս  
համարձակութիւնը չպիտի ունենայինք,  
եթէ այդ անուանք օտարաձայն եւ կամ  
այլալեզու բնագրաց ազդեցութեամբ յե-  
րիւրուած բարդ բառեր լինէին: Արդէն բո-  
լորովին օտար բառեր, ինչպէս ստուման, կաւ-  
փասկ եւն, դուրս թողի մեր կահուց դա-  
սէն ու նկարագրէն: Բայց բնիկ կոչում  
մը բնիկ իր մ'ալ կ'ենթադրէ, թէ եւ ո-  
մանց առիթը ներկայացած չլինի ինքնա-  
զրութեանց մէջ յիշուելու: Միանգամայն  
թարգմանութեանց առաջնորդութեամբ՝ մեր  
մերկ բառից զգեցուցինք յաճախ օտարաց  
ձեւերը: — Արդեօք անմոլա՞ր էր մեր այս  
ձեւնարկը. արդեօք հայ անուանք եւ ըս-  
պասք երբեմն լոկ մերձաւոր նմանութեամբ  
դրուած չե՞ն յունականաց դէմ, որոց ճըշ-  
գրիտ պատկերը չկարենան լինել՝ գէթ  
արուեստական նրբութեանց մէջ: Կարելի  
է, չեմ ժխտեր. բայց մոռնալու չենք՝ որ  
յոյն քաղաքակրթութեան ազդեցութիւնը  
շատ զգալի էր Արշակունեաց շրջանին՝  
թէ հայ ազնուականութեան, ինչպէս պի-  
տի տեսնենք մասամբ հետագայ նկարա-  
զրութեանց մէջ, եւ թէ մեր դրացի Պար-  
սից բարուց վրայ. եւ այդ ազդեցութիւնը  
բնականապէս պիտի տարածուէր նաեւ